Հաստատված է

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի

թիվ 5 նիստում

“17” դեկտեմբերի, 2020թ.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծանրաբեռնվածությունը ըստ ուսումնական պլանի համապատասխանում է կատարված ուսումնական աշխատանքի ծավալին: Ամբիոնի դասախոսները կատարել են ծանրաբեռնվածությամբ նախատեսված դասաժամերը: Համավարակով պայմանավորված ուսումնական գործընթացն ամբողջովին տեղափոխվել է առցանց հարթակ, այս գործընթացում դասախոսները գրեթե չեն ունեցել խնդիրներ, դասաժամերը հստակ իրականացրել են ըստ դասացուցակի, որևէ փոփոխության դեպքում տեղեկացրել են ամբիոնի մասնագետին, ով լրացումներ և նշումներ է կատարել էլեկտրոնային դասացուցակներում: Կատարվել են առարկայաուսումնամեթոդական փաթեթների վերանայումներ և լրամշակումներ, առարկայական նկարագրերը և տրոհումները բոլոր կուրսերում ներկայացվել են ըստ ներկայացված ձևաչափի և տեղադրվել են էլեկտրոնային հարթակում: Քննարկվել և հաստատվել են 2020-2021 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերը: Ուսումնական ծանրաբեռնվածությամբ և ըստ դասացուցակի դասախոսներն իրականացրել են իրենց 1-ին կիսամյակի դասաժամերը: Քննարկվել և հաստատվել են նաև ամբիոնի գծով երկու հայցորդի ատենախոսությունների թեմաների վերնագրերը, որոնք հաստատվել են ֆակուլտետի խորհրդում:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները, ուսումնասիրությունները պարբերաբար քննարկվել են ամբիոնում, որոնք առավելապես վերաբերում են դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքներին, դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությանը: Ամբիոնի դասախոսները դասաժամերի ընթացքում օգտվում են անհրաժեշտ տեխնիկայից, ցուցադրում եմ PP ներկայացումներ, հետևողական են և բավականին ակտիվ մուտքագրում են առարկաների դասավանյութերը <<Google classroom>> էլեկտրոնային հարթակում: Հետևում են դրանց ընթացին և ապահովում են հետադարձ կապը ուսանողների հետ: Դասախոսությունները և ուսումնական պարապմունքները կազմակերպվում են փոխգործուն մեթոդների կիրառմամբ՝ «Մտքերի տարափ», «Բանավեճ», «Դերային խաղ» և այլ մեթոդներով: Ուսուցանվող նյութի յուրացումն իրականացվում է խմբային առաջադրանքների կատարման միջոցով՝ «Ջիքսոյի», «Իրավիճակների վերլուծություն», «Գործնական խաղ» համագործակցային ուսուցման մեթոդներով: Ուսանողների ուսումնական ձեռքբերումները բացահայտվում են «Հեղինակի աթոռ», «Վեննի դիագրամ», «ԳՈՒՍ», «Կարճ շարադրություն» ինքնագնահատման մեթոդներով: 1-ին կիսամյակում ուսուցման առցանց պայմաններում դասախոսները էլ ավելի հմտացան Google classroom հարթակի տարբեր գործիքների կիրառման գործում, դասաժամի ընթացքում պարտադիր ցուցադրվող նյութը ուսանողներին տեսանելի էր դասախոսի էկրանի կիսման եղանակով, դասի ընթացքում կիրառվում էին տարատեսակ թեմատիկ տեսահոլովակների դիտումներ, ինչպես նաև գնահատվող և միջանկյալ ստուգումների հանձնարարությունների ստեղծման գործընթացներում դասախոսները կիրառում էին

առավել նպատակահարմար ստուգման ձևը:
Նշենք նաև հեռավար եղանակով կազմակերպվող մանկավարժական պրակտիկաների վերաբերյալ, որոնք նույնպես կազմակերպվում էին Google classroom էլեկտրոնային հարթակում՝ համագործակցելով գործընկեր մանկապարտեզների հետ: Բացի մանկապարտեզի կրթադաստիարակչական գործընթացի ներգրավումից, ղեկավարները և ուսանողները տեղադրում և դիտարկում էին մի շարք մասնագիտական տեսահոլովակներ, կատարում էին մեթոդիստի, մանկավարժի և հոգեբանի կողմից տեղադրված առաջադրանքները:
Մագիստրատուրա 2-րդ կուրսում մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվել է ըստ կազմված դասացուցակի, ուսանողները վարել են հեռավար դասեր, կիրառելով մի շարք դիդակտիկ նյութեր, տեսահոլովակների ցուցադրում և խմբային քննարկումներ:

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Յուրաքանչյուր առարկայի ուսումնառության արդյունքները ստուգվում են տվյալ առարկային համապատասխան ստուգման ձևերով /բանավոր և գրավոր ստուգողական աշխատանք, ռեֆերատ, ներկայացում, թղթապանակ, թեստային աշխատանք/: Նշված ստուգման ձևերից յուրաքանչյուրն ունի իր հստակ պահանջները, որոնք նախապես տրամադրվում են ուսանողներին: 2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում առկա ուսուցման համակարգում նախատեսված 2 միջանկյալ ստուգմամբ ավարտվող առարկաների համար ռեկտորատում որոշում կայացվեց, որ այս կիսամյակ բոլոր կուրսերում հանձնվելու է մեկ միջանկյալ ստուգում: Ուստի դասախոսները 2 միջանկյալ ստուգումներից ընտրել են առավել նպատակահարամր ձևը միջանկյալ ստուգման համար:

- Բանավոր, գրավոր ստուգողական և թեստային աշխատանքները գնահատվում են ըստ հարցերի համար նախատեսված միավորների /ընդամենը 100 միավոր/, հարցի բարդության և բովանդակության:
- Ռեֆերատ, կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների գնահատման համար ամբիոնում առկա են համապատասխան գնահատման բաղադրիչները, որոնք նույնպես նախապես տրվում են ուսանողներին:
- Թղթապանակը և ներկայացումը գնահատվում է ըստ ուսանողների ներկայացրած սահիկի, հաշվի առնելով ուսանողի ինքնուրույն և ստեղծագործական վերլուծությունները առաջդրված թեմաների շուրջ:
- Ընթացիկ ստուգման բաղադրիչի մեջ ըստ ամբիոնի որոշման որոշակի տոկոսային գնահատման մաս է կազմում էլեկտրոնային գնահատվող հանձնարարությունը: Մեկ գնահատվող հանձնարարությունը մինչև կիսամյակի վերջ պարտադիր է բոլոր դասընթացների համար:

Գնահատման բաղադրիչները տոկոսային տարբերակով համապատասխանեցվում են տեղեկատվական կենտրոնի կողմից ներկայացված և տեղադրված տոկոսներին:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերից կառանձնացնենք ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի, դրանց աշխատանքների կատարման ընթացի մասին քննարկումները, որոնք կազմակերպվում են քլասրումի համապատասխան էջերում:
Քննարկվող հիմնական հարցերից է նաև պրակտիկաների առցանց կազմակերպման,

մանկապարտեզների ընտրության քննարկման հարցը: Հիմնական հարցերից է հայցորդներ Մ.Աբասյանի և Լ.Ղազարյանի ատենախոսությունների վերնագրերի և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը: Ինչպես նաև ԿԳՄՍ նախարարության և Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի կողմից կազմակերպվող <<Նախակրթարանի դաստիարակների վերապատրաստման>> կազմակերպման հարցերի շուրջ քննարկումների հարցը:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Օգոստոսի 28, արձանագրություն թիվ 1	1. Ամբիոնի 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: 2. Ամբիոնի դասախոսների 2020-2021 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացում: 3. Ամբիոնի գծով 2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների հաստատման հարցը: 4. 2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը: 5. Ամբիոնի հայցորդներ՝ Մ.Աբասյանի և Լ.Ղազարյանի ատենախոսությունների թեմաների քննարկման և հաստատման հարցը: 6. Ամբիոնի 2020-2021 ուստարվա ուսումնամեթոդական,	Որոշեցին 1. Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային պլանը: 2. Ըստ առարկայական ծանրաբեռնվածության դասավանդվող առարկաները համակարգել ըստ բովանդակության և դասախոսի գիտական ու մեթոդական հետաքրքրությունների: 3. Հաստատել 2020-2021 ուս.տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերն ըստ նոր ձևաչափի ու առարկայական թեմատիկ տրոհումները /ծանրաբեռնվածությունը նախօրոք քննարկվել և ներկայացվել է/, երաշխավորել google classroom ներբեռնելու համար: 4. Հաստատել 2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը: 5. Հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 2019-20 ուս.տարվա հայցորդ Մարինե Աբասյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական զարգացման օրինաչափությունները ակմեկվալիտատիվ հայեցակարգի համատեքստում», և գիտական ղեկավար նշանակել՝ մ.գ.դ. պրոֆեսոր Վ.Ս.Կարապետյանին: Հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 2019-20 ուս.տարվա հայցորդ Լիլիթ Ղազարյանի ատենախոսության

	հետազոտական և կազմակերպչական խմբերի ձևավորման քննարկման հարցը: 7. ՀՀ ԿԳՍՄ նախարարության կողմից ստացված գրության քննարկման հարցը. «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ցանկերի ձևավորման և աշխատանքային խմբերի փորձագետների ընտրության ընթացակարգի»՝ չափորոշիչների մշակման աշխատանքային խմբում ընդգրկվող մասնագետի ներկայացման հարցը: 8. Ընթացիկ հարցեր	թեման հետևյալ վերնագրով «Ավագ նախադպրոցականի ինքնուրույն վարքագծի օրինաչափ դրսևորումները փորձարարական գործունեության կազմակերպման գործընթացում», և գիտական ղեկավար նշանակել՝ մ.գ.թ. պրոֆեսոր Ս.Ա.Մարությանին: 6. Հաստատել ամբիոնի 2020-2021 ուստարվա ընթացքում ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական խմբերը՝ ուսումնամեթոդական խմբի համակարգող մ.գ.թ.,դոցենտ Ա.Դալլաքյան, հետազոտական և կազմակերպչական խմբի համակարգող՝ Մ.Ամիրաղյան, Ա.Դալլաքյան, Վ,Կարապետյան: 7. «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ցանկերի ձևավորման և աշխատանքային խմբերի փորձագետների ընտրության ընթացակարգի»՝ չափորոշիչների մշակման աշխատանքային խմբում ընդգրկվելու համար ներկայացվեց ամբիոնի դասախոս Ի.Պոնոմարենկոն: 8. Քննարկել և հաստատել ՀՀ ԿՄԳՍ նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանի գրության՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչի վերանայման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբում ամբիոնի մասնագիտական կազմը՝ Հ.Խաչատրյան, Ա. Դալլաքյան, Մ.ԱՄիրաղյան և Ա.Խուգեյան:
Սեպտեմբերի 28, արձանագրություն թիվ 2	1.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների քննարկման հարցը: 2. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ քննարկման և առաջարկություններ կատարելու հարցը: (ԲԿԾ	1. Քննարկել և հաստատել 2020-2021 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարներնի և թեմաները: 2. Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկան կազմակերպվել է ս/թ. սեպտեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 22-ը (շաբաթական մեկ օր): 4-րդ կուրսի 2020-2021 ուստարվա 1-ին

	առկա 3-րդ կուրս՝ ուսումնաճանաչողական պրակտիկան /շաբաթական մեկ օր/ և ԲԿԾ առկա 4-րդ կուրս՝ ամփոփիչ ավարտական պրակտիկա /6 շաբաթյա/) 3. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասընթացների Google classroom էլ.հարթակում ուսումնական նյութերի տեղադրման և հեռավար ուսուցման իրականացման քննարկման հարցը: 4. Դասալսումների ժամանակացույցի և կազմակերպման քննարկման հարցը: 5. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ստացված գրության՝ «Նախադպրոցական կրթության պետական չափորոշչի» վերանայման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբում ամբիոնի մասնագետների ներկայացման հարցը:	կիսամյակի մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է ս/թ. նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 17-ը ՀՊՄՀ ռեկտորի 03.04.2020թ. 1096-Լ հրամանով սահմանված կարգով և հնարավորության դեպքում դրանք կազմակերպել առցանց: 3. Համավարակով պայմանավորված 1-ին կիսամյակի ուսուցումն առցանց հարթակում կազմակերպելու աշխատանքների վերաբերյալ քննարկումներ: 4. Քննարկել և հաստատել 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի առցանց դասալսումների կազմակերպման ժամանակացույցը: 5. Քննարկել և հաստատել օգոստոսի 10-ից 19-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի և Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի կողմից կազմակերպվող նախակրթարանի դաստիարակների համար առցանց վերապատրաստման կազմակերպման աշխատանքները, վերապատրաստման մոդուլային ծրագիրը, դասացուցակը, առցանց վերապատրաստման իրականացման արդյունավետ եղանակները:
Հոկտեմբերի 14, արձանագրություն թիվ 3	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի առցանց կազմակերպման հարցը (3 շաբաթ): 2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի google classroom էլ հարթակում ստեղծված էջերում աշխատանքների	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 2020-2021 ուստարվա նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 2-րդ կուրսի 1-ին կիսամյակի մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպել 2020 թ. նոյեմբերի 2-ից մինչև 20-ը: ՀՊՄՀ ռեկտորի 03.04.2020թ. 1096-Լ հրամանով սահմանված կարգով և հնարավորության դեպքում դրանք կազմակերպել առցանց՝ ըստ ներկայացված դասացուցակի: 2. Ստեղծված էլ.էջերում տեղադրել խորհրդատվությունների ժամանակացույց՝ ավարտական կուսրերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական

	կազմակերպման հարցը: 3. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը: 4. Ամբիոնի դասախոսների 2020 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը: 5. 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի ներբեռնման քննարկման հարցը: 6. «Բուկինիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված խաղ-վիկտորինաները, սեղանային խաղերը որպես ուսումնաօժանդակ նյութի կիրառման նպատակահարմարության քննարկման հարցը: 7. Ընթացիկ հարցեր:	թեզերի շրջանակում ուսանողների հետ քննարկումների և իրականացվող աշխատանքների կազմակերպման համար: 3. Քննարկել և հաստատել ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքներիի թեմաները և ղեկավարներին: 4. Քննարկել և հաստատել Ամբիոնի դասախոսների 2020 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի ցանկը, տեղադրել համապատասխան ձևաչափում և ներկայացնել գիտահետազոտական կենտրոն: 5. Հաստատել 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի, գնահատվող առաջադրանքների տեղադրման աշխատանքները ըստ ներկայացված ժամանակացույցի կազմակերպելու աշխատանքները: 6. Հաստատել «Բուկինիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված խաղ-վիկտորինաների, սեղանային խաղերի վերաբերյալ ներկայացված մասնագիտական կարծիքները:
Նոյեմբերի 22, արձանագրություն թիվ 4	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի առցանց կազմակերպման հարցը: Ամբիոնի ասիստենտ մ.գ.թ. Մ.Ավագյանի «Համագործակցային	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկան համավարակով պայմանավորված ուշ մեկնարկելու կապակցությամբ կավարտվի դեկտեմբերի 22-ին, պրակտիկան կամփոփվի պրակտիկայի թղթապանակների պաշտպանությամբ և ուսանողները կգնահատվեն հանձնաժողովի կողմից: Քննարկել և ներկայացնել առաջարկներ ամբիոնի ասիստենտ մ.գ.թ. Մ.Ավագյանի «Համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները

	կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները նախադպրոցական հաստատություններում» ուսումնամեթոդական ձեռնարկի հիմնական դրույթների և մեթոդաբանական հայեցակարգի քննարկման հարցը: Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի գիտաժողովի կազմակերպչական հարցերի քննարկում, ինչպես նաև նույն համալսարանի ամսագրի խմբագրական խորհրդում Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագետների ներկայացում (Ա.Դալլաքյան և Հ.Սարգսյան): Ուկրաինայի մանկավարժական գիտությունների ազգային ակադեմիայի սոցիալական հոգեբանության ինստիտուտի կողմից կազմակերպված հոգեբանության և մանկավարժության հարցերին նվիրված գիտաժողովին ամբիոնի վարիչ Վ.Ս.Կարապետյանի մասնակցության և գիտաժողովի նյութերի քննարկման հարցը: Հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը: Նախադպրոցական ոլորտի մասնագետների	նախադպրոցական հաստատություններում» ուսումնամեթոդական ձեռնարկի վերաբերյալ: Քննարկել Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի գիտաժողովում Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի որպես կազմակերպիչ ներգրավման, ինչպես նաև նույն համալսարանի ամսագրի խմբագրական խորհրդում ներկայացնել ամբիոնի մ.գ.թ., դոցենտներ Ա.Դալլաքյանի և Հ.Սարգսյանի թեկնածությունը: Քննարկել ամբիոնի վարիչ Վ.Կարապետյանի Ուկրաինայի մանկավարժական գիտությունների ազգային ակադեմիայի սոցիալական հոգեբանության ինստիտուտի կողմից կազմակերպված հոգեբանության և մանկավարժության հարցերին նվիրված գիտաժողովին մասնակցությունը: Հաստատել Հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը: Ինչպես նաև ըստ ներկայացված ժամանակացույցի կազմակերպել հեռակա 2-րդ և 3-րդ կուրսերի առցանց խորհրդատվությունները: Քննարկել Ծախմատի գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ կանխատեսվող վերապատրաստման ծրագիրը, ըստ որի նպատակահարմար կլինի կազմակերպել ՛՛Մանկապարտեզում շախմատի ներգրավման՛ վերաբերյալ վերապատրաստումներ:՛ Հաշվի առնելով ամբիոնի հայցորդներ՝ Մ.Աբասյանի և Լ.Ղազարյանի ներկայացրած հաշվետվությունները ատեստավորել:

	վերապատրաստման ծրագրի ներկայացման, քննարկման և հաստատման հարցը: Ընթացիկ հարցեր:	
Դեկտեմբերի 17, արձանագրություն թիվ 5	1. 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը: 2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա 4-րդ կուրսերի և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին: 3. Դասախոսների 2020 թ. գիտահետազոտական աշխատանքների և ընդհանուր գործունեության հաշվետվությունների ներկայացման հարցը: 4. Ամբիոնի դասախոսների 1-ին կիսամյակի առցանց դասալսումների քննարկման հարցը: 5. 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում առցանց ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների վերաբերյալ հարցը: 6. Ամբիոնի տարեկան հաշվետվության հաստատման հարցը: 7. Ընթացիկ հարցեր:	
Հունվար, արձանագրություն թիվ 6	1. 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի	

	կազմակերպման հարցը: 2. Հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացների կազմակերպման հարցը: 3. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և google classroom ներբեռնելու հարցը: 4. 2020-2021 ուս տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը: 5. 2020-2021 ուս տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների կազմակերպման հարցը:	
Փետրվար, արձանագրություն թիվ 7	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնա-ճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը: 2. ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ երկկողմանի հաշվետվությունների ներկայացում՝ ուսանողների և ղեկավարների ներգրավմամբ: 3. Ամբիոնի հայցորդների	

	աշխատանքային գործունեության ընթացքի մասին /հաշվետվություն/: 4. Ընթացիկ հարցեր:	
Մարտ, արձանագրություն թիվ 8	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքը: 2. Հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպում: 3. ԲԿԾ Առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: 4. Ընթացիկ հարցեր:	
Ապրիլ, արձանագրություն թիվ 9	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների քննարկում և հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը: 2. Google classroom էլեկտրոնային հարթակում դասախոսների աշխատանքների ընթացքի մասին: 3. Նախադպրոցական	

	մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը: 4. Ընթացիկ հարցեր:	
Մայիս, արձանագրություն թիվ 10	1. Հեռակա ուսուցման համակագի 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ներկայացում և հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը: 2. Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին: 3. 2020-2021ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում: 4. Ընթացիկ հարցեր:	
Հունիս, արձանագրություն թիվ 11	1. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկում: 2. 2020-21 ուսումնական տարվա ամբիոնի դասախոսների ծանրաբեռնվածության կատարման ընթացքի մասին քննարկում: 3. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պարկտիկաների	

	պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների մասին: 4. Ընթացիկ հարցեր	

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ. թեկն.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	8	1.25	1		4	1,5	2,25	10
Համատեղող	1				1			1
Ժամավճարային								
Ընդա-մենը	9	1.25	1		5	1.5	2.25	11

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:

Ուսումնամեթոդական աշխատանքը ամբիոնում բաժանված է 3 մասի.

1. Աշխատանք 1-ին կուրսեցիների հետ, ծանոթացնում ենք նրանց ինչպես օգտվել մասնագիտական գրականությունից, ինչպես ընտրել հիմնական հասկացություններ, բանալի բառերը, ինչպես օգտվել համապատասխան նյութերից, ինչպես հայերեն, այնպես էլ այլ լեզուներով, պարզաբանել հասկացությունները ըստ մանկավարժության տեսակետի:
2. Հաջորդ փուլը 2-րդ և 3-րդ կուրսերի հետ տարվող ուսումնամեթոդական աշխատանքն է՝ ռեֆերատների, կուրսայինների տեսքով: Ղեկավարները ծանոթացնում են տվյալ հանձնարարության մեթոդական համակարգին, ինչպես պետք է ապահովել ակադեմիական ազնվությունը՝ ճիշտ հղումներով ցույց տալով օգտագործած գրականությունունը:
3. Հատկապես կենտրոնացված մեթոդական աշխատանք է տարվում ավարտական և մագիստրոսական կուրսերում՝ կրկին շեշտը դնելով ակադեմիական ազնվության վրա, ներառելով տվյալ խնդրին վերաբերող վերջին հրատարակումները:

Կուրսայինների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար ստեղծվել են համապաստխան էլեկտրոնային էջեր, որտեղ տեղադրված են խորհրդատվությունների գրաֆիկները, որով էլ առաջնորդվում են դասախոսները և ուսանողները:

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնին հնարավորություն ընձեռնվեց կազմակերպել և իրականացնել շատ կարևոր մի վերապատրաստում՝ ՛՛Նախակրթարանի դաստիարակների վերապատրաստում՛՛:

2020 թվականի օգոստոսի 10-ից 19-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի

կենտրոն» ԾԻԳ-ի և Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի կողմից կազմակերպվել է նախակրթարանի դաստիարակների համար առցանց վերապատրաստման դասընթացը: Այն իրականացրել են ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի մասնագիտական թիմը՝ դասախոսներ Ս.Մարության, Ա.Դալլաքյան, Ք.Ասմարյան, Ս.Հովսեփյան, Ա.Խուգեյան, Ի.Պոնոմարենկո: Վերապատրաստմանը մասնակցել են թվով 22 մանկավարժներ Հայաստանի տարբեր մարզերից՝ Արարատ,Արմավիր,Արագածոտն, Գեղարքունիք, Սյունիք: Այսօր կարևորվում է դպրոց գնացող 5-6 տարեկան երեխաների մանկապարտեզից դպրոց սահուն անցման խնդիրը: Այն իրականացվում է ինչպես մանկապարտեզի ավագ խմբերում,այնպես էլ դպրոցներին կից նախակրթարաններում, որտեղ աշխատող մանկավարժները պետք է տիրապետեն ավագ նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման օրինաչափություններին, ուսումնադաստիարակչական գործընթացի առանձնահատկություններին, ունենան որոշակի մասնագիտական կոմպետենցիաներ: Դասընթացը իրականացվել է ըստ մոդուլային ծրագրի և դասացուցակի, դասերը հագեցած էին դիդակտիկ պարագաների ցուցադրմամբ, վերապատրաստվողներին տրամադրվող մասնագիտական հմտությունների և կարողությունների փոխանցմամբ, ինչպես նաև մասնագիտական գրականության տրամադրմամբ: Դասընթացի ավարտին մասնակիցները ստացել են վերապատրաստման մասնակցության վկայագրեր:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
	4				

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
4									

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնն իր հետազոտական գործունեության ողջ շրջանակը ամփոփում է նախադպրոցական

կրթության առկա վիճակը և զարգացման միտումները 21-րդ դարում համատեքստերում, ինչպես նաև "Խաղի և խաղալիքի գիտահետազոտական կենտրոնի" հետ կապված ընտրվել է Խաղային տեխնոլոգիաների նախագծման տեսական և մեթոդական հիմքերը ուսումնասիրությունների ուղղությունը: 2020-2021 ուս տարվա ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմատիկան ամբողջովին խաղային գործունեության շրջանակներում է, որը նպատակ է հետապնդում այս ոլորտում հետազոտությունների և քիչ հետազոտված հարցերի շուրջ բացահայտումներ անելուն: Սույն խորագրով աշխատանքները ենթադրում են կատարել համեմատական վերլուծություններ նախադպրոցական կրթության առկա վիճակի վերաբերյալ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ այլ երկրներում ձեռքբերումները, կազմակերպման դժվարությունները, կապված համագործակցային ուսուցման և ներառական կրթության կազմակերպման խնդիրների հետ: Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների վերանայման աշխատանքային խմբում ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից առաջարկված մասնագետների ընդգրկմանը ներկայացվել են ամբիոնի մասնագետներ՝ Ա.Դալլաքյանի, Հ.Խաչատրյանի, Մ.ԱՄիրաղյանի և Ա.Խուգեյանի թեկնածությունները: Նրանք մասնակցում են հեռավար քննարկումներին, ակտիվ են քննարկումներում և փորձում եմ մասնագիտորեն օգտակար լինել ժամանակակից նախադպրոցական կրթական չափորոշիչների բացերը լրացնելու և առավել արդյունավետ դարձնելու գործընթացում:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի դասախոսական կազմը սերտորեն համագործակցում է ուսանողների հետ, նրանց գիտահետազոտական աշխատանքներում տալով ուղղություն: Շատ գիտահետազոտական աշխատանքներ ներկայացվում են որպես գիտական հոդվածներ, տպագրվում են տարատեսակ ամսագրերում: Ամբիոնը ֆակուլտետի հետ միասին կազմակերպել է 2020-2021 ուս տարվա 1-ին կուրսեցիների օնլայն հարթակից օգտվելու և հեռավար դասընթացների բոլոր առանձնահատկությունների վերաբերյալ սեմինար: Մանրակրկիտ ներկայացվել է քլասրումի գործիքակազմը, միթով դասերին միանալու ձևաչափը: Ուսանողները հեռավար կրթության ընթացքում չեն հանդիպել որևէ դժվարության:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Հաշվետու տարում առցանց ուսուցման պայմաններում ապահովվել է իրականացվող պրակտիկայի և ուսումնասիրվող դասընթացների կապը, ներկայացվող պահանջները, որոնցից ձեռք բերված արդյունքներն արտացոլվում են ուսանողների կողմից իրականացվող հետազոտություններում (ռեֆերատ, կուրսային, ավարտական, մանկավարժական իրավիճակների վերլուծություն):

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			
	Կիրառական			

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Մարիաննա Ավագյան, Աննա Սիմոնյան	Ամաչկոտության դրսևորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում	8
Amiraghyan M. Karapetyan V., Marutyan S.	Multimedia education in the kindergartens of Armenia	5
Խուգեյան Ա., Մարության Ս, Պոնոմարենկո Ի	Երկխոսությունը որպես նախադպրոցականի խոսքային հաղորդակցման ձև	4
Карапетян В.С., Даллакян А.М.	Влияние семантических установок при решении студентами учебно-познавательных задач	2
Պոնոմարենկո Ի., Խուգեյան Ա., Ասմարյան Ք.	Գերակտիվ երեխաների հետ տարվող աշխատանքի առանձնահատկությունները	4
Հ. Խաչատրյան Ս. Խաչատրյան Ն.Մովսիսյան	Քննադատական մտածողության տարրերի արտացոլումը "<<Շախմատ>> ուսումնական առարկայի չափորոշիչներում:	9
Ruben MIRZAKHANYAN, Srbuhi GEVORGYAN, Vladimir KARAPETYAN, Alla DALLAKYAN, Asya BERBERYAN	Typical Expression of Cognitive Dissonance and Consonance in the Course of Argumentation among Primary-School Children Playing Chess	10
Карапетян В.С., Далакян А.М.	Методологические проблемы организации профессионального образования	4
Карапетян В.С., Далакян А.М. , Геворкян С.Р.	О проблеме трансформации цели деятельности	6
Карапетян В.С., Далакян А.М.	Преобразование цели деятельности в стимулировании игровой активности дошкольников	4

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՃԻԳ-ի և Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ամբիոնի կողմից կազմակերպվել է նախակրթարանի դաստիարակների համար առցանց վերապատրաստման դասընթաց	Առցանց, օգոստոսի 10-19

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական-մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
Մարիաննա Ամիրաղյան Գիգոլի	Թեկնածուական ատենախոսություն «Նախադպրոցականի խոսքի լեզվաբանական վերլուծությունը որպես կրթական ծրագրի մշակման հիմք»	09.11.2020	Ա # 09530

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
Կամավորական գործունեություն ՈՒԽ հետ համատեղ աշխատանքների կազմակերպում	Ռազմական դրության պայմաններում ամբիոնը նախաձեռնել էր կամավորական մի շարք աշխատանքներ:		

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Հանրապետական			
Տարածաշրջանային			

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Ամբիոնը սերտ կապեր է պահպանում միջազգային մի շարք ԲՈՒՀ-երի համապատասխան ամբիոնների հետ՝ հատկապես Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի հետ, Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի և Խարկովի ազգային պետական մանկավարժական համալսարանի հետ: Ամբիոնը մշտական կապի մեջ է այս ԲՈՒՀ-երի հետ, պարբերաբար ստանում է այդ ԲՈՒՀ-երում իրականացվող գործընթացների մասին և մասնակցում տարատեսակն սեմինար-քննարկումների, կոնֆերանսների:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
● Ամբիոնը համագործակցում է ֆակուլտետի մյուս ամբիոնների, համահամալսարանական մանկավարժության երկու ամբիոնների հետ: Ամբիոնը պարբերաբար մասնակցում է կազմակերպված գիտաժողովներին: ● «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության հետ համագործակցություն «Նախադպրոցական ներառական կրթություն» հիմնահարցի շրջանակում: ● ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցության շրջանակում ամբիոնի մասնագետները մասնակցում են պետական կրթական չափորոշիչների, միջին մասնագիտական կրթության չափորոշիչների վերանայման գործընթացներին:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
Խարկովի ազգային պետական մանկավարժական համալսարան			ՀՊՄՀ-ն հանդես է գալիս որպես 6 կազմակերպիչներից մեկը՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ներկայացմամբ		
Մոսկվայի	Ամբիոնը				

պետական մանկավարժական համալսարանի Նախադպրոցական կրթության, նախադպրոցական մանկավարժության մեթոդիկաների ամբիոններ	պարբերաբար քննարկումներ է ունենում տվյալ ամբիոնների մասնագիտական խմբի հետ, նորարարական ուսումնամեթոդական գործընթացների ն ծանոթանալու նպատակով, ինչպես նաև փորձի փոխանակման շրջանակներում:				
Մ.Տանկի անվան Բելառուսի պետական մանկավարժական համալսարան		+			

Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն				
Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում				
Դասախոս Ա.Ա.Հ.	Պաշտոն	Երկիր/բուհ	Մնալու ժամկետ	Արդյունքներ
Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ				

Համագործակցային միջազգային ծրագրեր			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ

Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
2020 թվականի 1-ին կիսամյակում համավարակի պայմաններում թե՛ դպրոցներում, թե՛ ԲՈՒՀ-ում ուսուցումն իրականացվել է առավելապես հեռավար տարբերակով, ուստի այցեր 1-ին կիսամյակում չեն իրականացվել, սակայն աշակերտների հետ հետադարձ կապը ամբիոնը փորձել է կազմակերպել առցանց հարթակում, տարածելով ֆակուլտետի և ամբիոնի մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական			
Մեթոդական			
Դաստիարակչական			

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնի դասախոսները պարբերաբար աշխատում են մասնագիտական որակի ապահովման ներքին համակարգի վրա, իրականացնում են փոխադարձ դասալսումներ՝ կատարում ամբիոնային քննարկումներ, ինչպես նաև դասընթացների բովանդակային որակը փորձում են պահպանել էլեկտրոնային հարթակում:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
(տեքստը այստեղ)

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Դասալսումներ	Ամբիոնի վարիչ՝ Վլադիմիր	Դասախոսների կատարած

	Կարապետյան, ամբիոնի պրոֆեսոր՝ Ս.Մարության	աշխատանքի մշտադիտարկում, ներկայացված պահանջների հաշվառում, ուսանողների հետ հետադարձ կապի պահպանում, ներառական կրթության մասին